ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախահագությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Ի թիվս օրակարգի այլ հարցերի, նիստի մասնակիցները քննարկեցին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների ծրագիրը: Միջոցառումների նախապատրաստման հանձնախմբի նախագահ, Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը զեկուցեց հանձնախմբի կատարած աշխատանքների մասին: Առանցքային միջոցառումների թվում են Ուխտի Սուրբ Պատարագները, որի շրջանակներում տարբեր կիրակիներ Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներն իրենց հավատացյալ հոտի հետ միասին ուխտագնացություն են կատարում Ս. Էջմիածին և Ուխտի Ս. Պատարագ մատուցում համայն հայության Մայր Տաճարում: Այս տարվա ընթացքում Ուխտի Պատարագներ են մատուցել արդեն Արմավիրի և Կոտայքի թեմերի առաջնորդները:

Նիստի ընթացքում լսվեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2002 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ